

ըոյն ուրոյն ի տեղ առաքեաց, եւ երբ եկաք՝ գտէրդ մեր ի յարկ հայուն գտաք մտեալ, այլ ոչ ոք երեւեալ անդ բայց միայն դա, քանզի եւ օտա նմին մօտ էր եւ զրակից էր նմա: Եւ նա երդմունս արարեալ եւ ուրացեալ ի գործոյն թէ Չեմ արարեալ: Եւ զայմախամն ասէր թէ ի կերպարանաց քոց ճանաչիս գող, այլ եւ յօնիցդ եւ աչացդ. եւ ետ ի ձեռս զափուծիլար քեհեասուեն եւ զգիր ըոռճկին որ ունէր ի թագաւորէն զափուծի գողով, զայն եհատ եւ պահանջէր զինչսն: Երեկի օրս, որ Եշի էր, ասացին՝ Օրս մարտեան ընդ միսեանս վասն Ֆռանկին եւ Թրքին: Եւ օրս հիւանդ էր Տիւէկին:

Շարաթ (11 Եւ-լա). երեկոյիս մարդ եկն ի պատերազմէն. ստուգ¹⁾ համբաւ ոչ կայր այլ խոռն:

Կիրակի ժի-ի: Յաւուրս ի գեղէն այն որ մօտ և հանդէպ Իզնիմիտու, անտի ըմբռնեալ զարս ոմանս պանդխտացն եւ ի բնակչացն ժէ ոգի՝ բերեալ ի թին եղին, որ էին ի Հայոց եւ ի Տաճկաց, եւ փաշա այնմ քաղաքին եւս գրամս առեալ թէ Չգողս ձեր գիտէք, ցուցէ՛ք ինձ: Այս եղեւ սակաւ օրերս, որ գալով զիչերաւ ի վերայ գեղին արք²⁾ Լ կամ աւելի կամ պակաս, եւ կանգնին ի հեռաստանէ յաջմէ եւ յահեկէ գիւղին ի վեր եւ ի վայր եւ ձայնեն թէ Մի՛ ելանէք, թէ չէ՛ գելօղսն հարկանեմք նետիւք. և այլք երթան առ տուն քահանայի գեղոյն այնմիկ, որոյ անունն ասի Պետրոս երէց՝ ձերագոյն և ալևսրեալ լի աւուրբք, ըմբռնեալ ի վերայ հացի սեղանոյն եւ մի տապար իջուցեալ ի վերայ նորա՝ հարկանել մինչև անշունչ լինելոյ, եւ ապա վեր առեալ հարցանեն թէ Ասա՛ մեզ զինչս քո սէր իցէ: Եւ չարչարանօք յոյժ տանջեն հրացեալ շամփրօք եւ սաղաւարտիւք. նոյնպէս եւ

1) ստուգ.

2) արս.